# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

---

ք. Երևան 25.06.2021թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**

**թիվ ՍՑ-ՆԳ-2021/148**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 07.06.2021թ. թիվ 26/26-1/9111-2021 գրությամբ «Կատրին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

**1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 01.06.2021թ. թիվ ՊՆ/02/2898-2021 գրության հիման վրա, 07.06.2021թ. թիվ 26/26-1/9111-2021 գրությամբ նախաձեռնել է «Կատրին» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

**2. <u>«Կատրին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Կատրին» ՍՊԸ-ի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 14.06.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 01.06.2021թ. թիվ ՊՆ/02/2898-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար թիրախների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-2/1» ծածկագրով գնման ընթացակարգին, ի թիվս այլ մասնակցի, հայտ է ներկայացրել նաև «Կատրին» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Մասնակից): Հայտերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ «Կատրին» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում բացակայում է հայտի ապահովումը:

Հաշվի առնելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը առաջարկել է Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը չի շտկվել, ուստի գնահատող հանձնաժողովը մերժել է «Կատրին» ՍՊԸ-ի հայտը:

Կից ներկայացվում են Մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի շրջանակներում 14.06.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**4. <u>ՍՑ-ՆԳ-2021/148 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ՆԳ-2021/148 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-2/1» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Կատրին» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.05.2021թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ արձանագրվել է հետևյալը. «Կատրին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային հայտում բացակայում է հայտի ապահովումը (Մասնակիցը հայտով ներկայացրել է գրություն համաձայն որի հայտնել է, որ հայտի ապահովում չի ներկայացրել, քանի որ «Կատրին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը): «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-2/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.1 կետով նախատեսված է, որ Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում: Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 3) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է սույն հրավերով սահմանված առավելագույն գնի հինգ տոկոսին (առավելագույն գինը սահմանված է հրավերի պայմանագրի նախագծի գնման ժամանակացույցում):

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը 21.05.2021թ. որոշեց կասեցնել նիստը և առաջարկել մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 21.05.2021թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ հետևյալ բովանդակությամբ. ««ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-2/1» ծածկագրով ընթացակարգին Ձեր կողմից ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝

Ձեր կողմից ներկայացված հայտում բացակայում է հայտի ապահովումը: «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-2/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.1 կետով նախատեսված է, որ Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում: ***<u>Հայտի ապահովումը</u> ներկայացվում է բանկային***

***երաշխիքի (հավելված 3) կամ կանխիկ փողի ձևով, <u>որի չափը հավասար է սույն հրավերով սահմանված առավելագույն գնի հինգ տոկոսին</u> (առավելագույն գինը սահմանված է հրավերի պայմանագրի նախագծի գնման ժամանակացույցում)***: Քանի որ սույն ընթացակարգի շրջանակներում ընտրված մասնակցի հետ պայմանագիր է կնքվելու ոչ թե ներկայացված գնային առաջարկով ներկայացված գնով (գնային առաջարկով ներկայացված գինը թիրախների յուրաքանչյուր տեսակի միավորի գների հանրագումարն է), այլ հրավերով նախատեսված առավելագույն գնով, ուստի հրավերով սահմանվել է, որ հայտի ապահովումը ներկայացվում է հրավերով սահմանված կարգով, որի չափը հավասար է սույն հրավերով սահմանված առավելագույն գնի հինգ տոկոսին:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը կասեցրել է նիստը՝ անհրաժեշտ է սույն ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը և ներկայացնել հայտի ապահովում՝ հրավերով սահմանված առավելագույն գնի հինգ տոկոսի չափով»:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նիստի թիվ 5 արձանագրությամբ արձանագրվել է, որ 25.05.2021թ. շարունակելով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստը գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Կատրին» ՍՊԸ-ն չի ներկայացրել, պահանջվող շտկումը՝ հայտի ապահովումը: Մասնակիցը հանձնաժողովին ներկայացրել է գրություն համաձայն, որի հայտնել է, որ հայտի ապահովում չի ներկայացրել, քանի որ «Կատրին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը: Միաժամանակ «Կատրին» ՍՊԸ-ն նշել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն ընթացակարգի շրջանակներում մասնակիցը պետք է հայտով ներկայացնի հայտի ապահովում ոչ թե գնային առաջարկի այլ հրավերով սահմանված առավելագույն գնի հինգ տոկոսի չափով, հետևաբար Ընկերությունը կսահմանափակեր իր մասնակցությունը, ինչպես նաև կներակայացներ այլ գնային առաջարկ, քանի որ հայտի ապահովումը իրենից ենթադրում է լրացուցիչ ֆինանսական ծախսեր»:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել մերժել «Կատրին» ՍՊԸ-ի հայտը:

**5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության՝ 07.06.2021թ. թիվ 26/26-1/9111-2021 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 01.06.2021թ. թիվ ՊՆ/02/2898-2021 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. ***խախտել է*** պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է*** պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,***

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին:*** Հայտի ապահովումը ներկայացվում է

միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի ե) պարբերության համաձայն՝ ***հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում:*** Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Նույն կետի 9-րդ ենթակետով սահմանվում է, որ եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում, իսկ պայմանագրի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության ծառայությունների գնման դեպքում պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա ինչպես հայտի, այնպես էլ պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Ընդ որում, ***հայտի ապահովման չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին***, և եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն ենթակետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ

***մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը*** կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ***ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում սպանձնված պարտավորության խախտում:***

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝*** հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:*** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

***Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է,*** ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-2/1» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Կատրին» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.05.2021թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ արձանագրվել է հետևյալը. «Կատրին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային հայտում բացակայում է հայտի ապահովումը (Մասնակիցը հայտով

ներկայացրել է գրություն համաձայն որի հայտնել է, որ հայտի ապահովում չի ներկայացրել, քանի որ «Կատրին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը): «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-2/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.1 կետով նախատեսված է, որ Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում: Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 3) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է սույն հրավերով սահմանված առավելագույն գնի հինգ տոկոսին (առավելագույն գինը սահմանված է հրավերի պայմանագրի նախագծի գնման ժամանակացույցում):

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը 21.05.2021թ. որոշեց կասեցնել նիստը և առաջարկել մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

***Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը*** Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 21.05.2021թ. ***ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ հետևյալ բովանդակությամբ***. ««ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-2/1» ծածկագրով ընթացակարգին Ձեր կողմից ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝

***Ձեր կողմից ներկայացված հայտում բացակայում է հայտի ապահովումը***: «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-2/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.1 կետով նախատեսված է, որ Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում: ***Հայտի ապահովումը*** ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 3) կամ կանխիկ փողի ձևով, ***որի չափը հավասար է սույն հրավերով սահմանված առավելագույն գնի հինգ տոկոսին (առավելագույն գինը սահմանված է հրավերի պայմանագրի նախագծի գնման ժամանակացույցում)***: Քանի որ սույն ընթացակարգի շրջանակներում ընտրված մասնակցի հետ պայմանագիր է կնքվելու ոչ թե ներկայացված գնային առաջարկով ներկայացված գնով (գնային առաջարկով ներկայացված գինը թիրախների յուրաքանչյուր տեսակի միավորի գների հանրագումարն է), այլ հրավերով նախատեսված առավելագույն գնով, ուստի հրավերով սահմանվել է, որ հայտի ապահովումը ներկայացվում է հրավերով սահմանված կարգով, որի չափը հավասար է սույն հրավերով սահմանված առավելագույն գնի հինգ տոկոսին:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող

հանձնաժողովը կասեցրել է նիստը՝ անհրաժեշտ է սույն ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը և ներկայացնել հայտի ապահովում՝ հրավերով սահմանված առավելագույն գնի հինգ տոկոսի չափով»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նիստի թիվ 5 արձանագրությամբ արձանագրվել է, որ 25.05.2021թ. շարունակելով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստը գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Կատրին» ՍՊԸ-ն չի ներկայացրել, պահանջվող շտկումը՝ հայտի ապահովումը: Մասնակիցը հանձնաժողովին ներկայացրել է գրություն համաձայն, որի հայտնել է, որ հայտի ապահովում չի ներկայացրել, քանի որ «Կատրին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը: Միաժամանակ «Կատրին» ՍՊԸ-ն նշել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն ընթացակարգի շրջանակներում մասնակիցը պետք է հայտով ներկայացնի հայտի ապահովում ոչ թե գնային առաջարկի այլ հրավերով սահմանված առավելագույն գնի հինգ տոկոսի չափով, հետևաբար Ընկերությունը կսահմանափակեր իր մասնակցությունը, ինչպես նաև կներակայացներ այլ գնային առաջարկ, քանի որ հայտի ապահովումը իրենից ենթադրում է լրացուցիչ ֆինանսական ծախսեր»:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել մերժել «Կատրին» ՍՊԸ-ի հայտը:

Ամփոփելով վերը նշված փաստերը՝ արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը՝ ծանուցելով Ընկերությանը Կարգի 41-րդ կետի համաձայն շտկելու արձանագրված անհամապատասխանությունը, ծանուցմամբ հայտնել է, որ վերջինս պետք է ներկայացնի հայտի ապահովում, որի չափը հավասար է Ընթացակարգի հրավերով սահմանված առավելագույն գնի հինգ տոկոսին և Ընկերության հայտը մերժվել է Կարգի 42-րդ հիմքով, քանի որ վերջինս, Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվելով արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, չի ներկայացրել Ընթացակարգի հրավերով սահմանված հայտի ապահովումը, որի չափը հավասար է «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-2/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված առավելագույն գնի հինգ տոկոսին:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է ***հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին:***

Կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետով սահմանվում է, որ ***հայտի ապահովման չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին*** և եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն ենթակետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:

Այսպիսով՝ ***վերոնշված իրավակարգավորումներով որպես հայտի ապահովման չափ սահմանվել է*** մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսը, մինչդեռ՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուն Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 7-րդ կետի 7.1-րդ ենթակետով որպես ***հայտի ապահովման չափ սահմանել է Ընթացակարգի հրավերով սահմանված առավելագույն գնի հինգ տոկոսը,*** որպիսի պայմաններում արձանագրում եմ, որ Պատվիրատուն գործել է Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի և Կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետով սահմանված պահանջների խախտմամբ, հետևաբար գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները, այն է՝ Ընկերության հայտը՝ հայտի ապահովումը հրավերով սահմանված առավելագույն գնի հինգ տոկոսի չափով չներկայացնելու հիմքով մերժելը, իրավաչափ չեն:

Հաշվի առնելով այն փաստական հանգամանքը, որ Ընթացակարգը կազմակերպվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ, հետևաբար գտնում եմ, որ ոչ իրավաչափ Ընթացակարգից բխող բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Ընկերության, ուստի հնարավոր չէ արձանագրել «Կատրին» ՍՊԸ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման փաստը, ուստի գտնում եմ, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 07.06.2021թ. թիվ 26/26-1/9111-2021 գրությամբ «Կատրին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**